

Ե. ՇԱՀԱՋԻՉ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԼԱԴՍՏՈՆԻՆ ԵՎ ԴՐԱ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1890 թվի դեկտեմբերին, ամսաթիվը չենք հիշում, նոր նախընտանում լուր տարածվեց, թե բանաստեղծ Ռ. Պատկանյանը մի աղերսալից թուղթ է ուղարկել հանրահռչակ Գլադստոնին օգնության ձեռք մեկնելու թյուրքիայի հայերին, բայց թե ի՞նչ էր գրել, այդ ոչ ոք չգիտեր, այդ մասին, գոնե, ոչ ոք չէր խոսում: Մարդիկ այդ մասին արդեն գաղտնաբար էին խոսում, լուրը հաղորդում էին միմյանց ականջի շշուկով, մի առանձին խորհրդավորությամբ և այնպիսի կցկտուր եղանակով, որ, բնականաբար, շատ բան չէր կարելի հասկանալ:

Եվ մի քանի ժամանակ այդ լուրը խոսակցության առարկա լինելուց հետո հնացավ և մոռացության տրվեց: Որ թուղթն ուղարկվել էր, այդ մասին կասկած չէր կարող լինել, որովհետև այդ մասին խոսում էին և այնպիսի անհատներ, որոնցից Պատկանյանը գաղտնիք չպետք է ունենար, բայց թե ուղարկված թուղթը իր ժամանակին տեղ հասել է թե ոչ, և, եթե հասել էր, ի՞նչ պատասխան էր ստացվել, այդ չիմացվեց, անհայտ մնաց:

Անցավ ժամանակ, և, վերջապես, հայտնվեց, դարձյալ խիստ գաղտնաբար, թե պատասխան ստացվել է, և դրական պատասխան, բայց այդ մասին չպետք է խոսել, խորագույն գաղտնիք պետք է պահել: Դրանից հետո և բանաստեղծի թուղթը, և՛ ստացված պատասխանը, և՛ դրան հաջորդող բոլոր հանգամանքները կորցրին իրենց շահեկանությունը և այդպես էլ գաղտնիքը մնաց գաղտնիք և հանգամանորեն ոչինչ չպարզվեց:

Եվ ի՞նչ պիտի պարզվեր: Ավելի խոր, ավելի լուրջ մտածող մարդկանց համար հասկանալի էր, թե ի՞նչ պիտի գրած լիներ Պատկանյանը և ի՞նչ պատասխան ստացած: Պատկանյանի կողմից՝ խնդիրք, աղերսանք, Գլադստոնի կողմից՝ մի քաղաքավարի, բարյացակամ խոսք, ուշադրություն, որ կարող էր և արդարանալ և շարդարանալ:

1891 թվին մենք առիթ ունեցանք տեսնել Պատկանյանին Կիսլավոդսկում, ուր եկել էր նա բժշկվելու իր օրեցօր սաստկացող

վտանգավոր հիվանդությունից և այն մտերմական հարաբերությունն ունենալ նրա հետ, որի մասին մենք արդեն խոսել ենք մեր նրա մասին գրած «Հիշողությունների» մեջ (տես «Իմ հիշողությունները Ռ. Պատկանյանի մասին», Տարազ, 1901 թ. համարներ— 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 19, 20, 23, 24, 25, և 26): Այստեղ մենք խոսակցություն ունեցանք և հիշյալ գրագրության մասին: Նա դեռ չէր կորցրել իր հույսը և անհամբեր սպասում էր «Մեծ մարդու» խոստմունքի իրագործման և ըստպասում էր հաստատուն, վառ հույսերով: «Գաղտնապահություն, գաղտնապահություն, Աստծու սիրուն համար», անդադար կրկնում էր նա, «թե չէ, մենք կորած ենք»:

«Էհ, ի՞նչ պիտի գրելի ես», ասում էր նա, «գա մի ցաված սրտի հուսահատ աղաղակ ու չիչ էր, որ ես հասցրի նրան— համարում նկարագրություն «թյուրքահայաստան» կոչված դժոխքի, որի հանգամանքները ձեզ էլ անկասկած հայտնի են, օգնություն թախանձեցի վերահաս վտանգից»:

Մենք ասացինք, որ Պատկանյանը չէր կորցրել իր հույսը և սպասում էր հաստատապես, վառ հույսերով «Մեծ մարդու» խոստման իրագործման և այդպիսի ջերմ հավատով էլ նա մեռավ 1892 թվի օգոստոսի 22-ին և իր հետ գերեզման տարավ և իր միամտաբար տածած հույսերը:

Գլադստոնը, անկասկած, հայտնի մարդ է եղել, նշանավոր պետական գործիչ, նա իր պատասխանը Պատկանյանին գրելու պահին իրոք առջված է եղել վճռականությամբ և վերահաս վտանգի ժամանակ արել է այնքան, որքան կարողացել է, որքան հնար է եղել: Նա Չեստերի միտինգում՝ 1895 թվի հուլիսի 26-ին, Լիվերպուլի միտինգում՝ 1896 թվի սեպտեմբերի 26-ին և Հաուարդնում՝ 1897 թվի հունվարի 6-ին սուլթան Աբդուլ Համիդի կառավարության բռնած ընթացքը հայերի վերաբերմամբ ամփոփելով չորս խոսքի մեջ— կողոպուտ, սպանություն, բռնություն և լլկումն,— կոչ է արել չհավատալ սուլթանի խոստումներին, հրավիրել է պաշտպան հանդիսանալ հայերին, հիշեցրել է Անգլիայի կառավարության այն պարտականությունները,

որ նա հանձն էր առել հայերի և Հայաստանի հանդեպ, նշավակել է Եվրոպայի բռնած ընթացքը, նրա գործադրած միջոցների, դիվանագիտական գործողությունների անգործնականությունը և ընդհանրապես մեծ պետությունների պարտազանցությունը և մեղմ վարմունքը և, վերջապես, ջարտել է սուլթանի հասցեին «Մեծ մարդասպան» զարհուրելի որակումը, որով և վառել է ամենուրեք գութ ունեցող մարդկանց սրտերը: Բայց նա իր այդ համարձակ ելույթներով, կրակոտ և աչք ծակող խոսքերով անկարող է եղել շարժել ոչ միայն մեծ պետությունների կառավարությունների գլուխ կանգնած մարդկանց սրտերը, որոնք, Բեռլինի վեհաժողովի դաշնադրության համաձայն, պարտականություն էին ստանձնել պաշտպանելու հայերին, բարենորոգումներ մտցնել տալով սուլթանին հայաբնակ վիլայեթներում, այլ և յուր իսկ հայրենիքի կառավարության, որ կրկնակի պարտականություն էր ստանձնել և հիշյալ դաշնագրության գործությամբ մյուս պետությունների հետ միասին, և Կիպրոսի կոնվենցիայով առանձնապես:

Այդ բոլորը նա արել է. նա նույնն արել էր և բուլղարների համար 1876 թվին, գրելով յուր նշանավոր «Բուլղարական արհամիրքները» և նշավակելով թյուրք կառավարության նդւնալիսի ընթացքը:

Նրա արդարացի բողոքները հայկական արհամիրքների գործում ուղղած են եղել ընդհանրապես Եվրոպայի դեմ և մասնավորապես Անգլիայի կառավարության դեմ:

Գլադստոնը, անկասկած, քաջ ծանոթ է եղել թե՛ Բեռլինի վեհաժողովի հանգամանքներին, թե՛ հայկական ռեֆորմների խնդրին և թե՛ այդ ռեֆորմները հայաբնակ վիլայեթներում իրագործելու վերաբերմամբ բռնած ընթացքին. նա, անշուշտ, իր պրեմյերության ժամանակները ճիշտ տեղեկություններ ստացած կլիներ իր Պոլսի դեսպանից Հայաստանում օրեցօր կատարված և կատարվող իրադարձությունների և սուլթանի ռեֆորմների խնդիրը փակած լինելու համար ծրագրած և հետզհետե գործադրված և գործադրվելիք միջոցների մասին:

Թեև Գլադստոնի հետին թվով թափած աշխատանքից ու ճիգերից ոչ մի դրական արդյունք չի ստացվել, բայց և այնպես նա արժանացել է ժամանակի հայրության երախտագիտության հենց միայն յուր խիզախ ճշմարտախոսության համար, յուր

հայրենիքի կառավարության և մյուսներին իրենց ստանձնած պարտականությունները գիտակցելու և կատարելու հորդոր կարդալու համար:

Նրան նվիրաբերվել է մի հայերեն հին մագաղաթյա մանրանկարներով զարդարված թանգարժեք ձեռագիր ավետարան, մի հայկական արվեստի գեղեցիկ գործ, որ նա այնքան սիրել, հավանել ու գնահատել է, որ պատվիրել է դնել այն յուր կրծքին, երբ ինքը վախճանվի: Եվ մենք մեր շնորհալի թարգմանիչ Փիլիպոս Վարդանյանի ջրքերի մեջ տեսել ենք մի անգլերեն գիրք, նվիրված նրա կյանքին ու գործունեության, որի մեջ և նրա մի պատկերը դագաղի մեջ հիշյալ ձեռագիրը կրծքին: Որքան մենք դիտենք, Փիլիպոս Վարդանյանն է եղել, որ 1897 թվին հատկապես քաջ ուսած լինելով անգլերեն լեզուն, Թբիլիսից տարել է այդ ընտիր ընծան, ներկայացել Հառարդրում, ձեռքը համբուրել և մատուցել նրան:

Հայտնի Առաքել Ապեր Ծատուրյանը, որ գնացած է եղել Վարդանյանի հետ Անգլիա, յուր ծախքով Անգլիայի լավագույն նկարիչ Ֆրամիտոնին նկարազարդել է տվել Հառարդրնի եկեղեցու 21 ոտնաչափ բարձրություն ունեցող լուսամուտը, քաշել տալով նրա վրա Բարդուղիմեոս առաքյալի և Գրիգոր Լուսավորչի մեծագիր պատկերները՝ ի հիշատակ Սասնո նահատակների:

1897 թվի հունվարի 6-ին, երբ Հառարդրում կատարվել է հիշյալ լուսամտի բացման և տիկին Գլադստոնի ծննդյան 85-ամյակի տարեդարձի առթիվ կազմված ընտանեկան հանդեսը և վերջին անգամ Գլադստոնը խոսել է հայերի մասին (նա վախճանվել է 1898 թ. մայիսի 6-ին), Հնդկաստանի և կղզիների հայերի կողմից նվիրվել է տիկնոջը Մկրտիչ կաթողիկոսի զարդարուն պատկերը:

Անցան տարիներ. ցարական իշխանությունը տապալվեց և Դոնի նահանգում ես, ինչպես Ռուսաստանում, ամենուրեք հաստատվեց հորհրդային իշխանությունը:

Նոր Նախիջևանում ձեռնարկվեց պատմական արժեքավոր իրեր հավաքելու գործին, և առաջին հերթին ստացվեցին Ռաֆայել Պատկանյանի և Միքայել Նալբանդյանի թղթերը, գրքերը, իրերը, որոնք, մինչև այդ, տարիներից ի վեր խնամքով պահվում էին նրանց ժառանգների մոտ — առաջինը՝ բանաստեղծի որդի Եվգենիոս Պատկանյանի մոտ, երկրորդինը՝ յուր եղբորորդի (Գրիգորի

որդի) Հարություն Նալբանդյանի մոտ: Այդ իրերը և թղթերը հետո, 1922 թվին, Շրջանային թանգարանի մյուս բոլոր միևնույն այդ հավաքված իրերի և Նոր Նախիջևանի եկեղեցիներից առնված բարգամթիվ (400 հատ) հին, թանգարածեք ձեռագիր մատյանների հետ միասին մեր ձեռքով փոխադրվեցին Հայաստանի Պետ. թանգարանը:

Այստեղ, ահա, Պետ. թանգարանում Պատկանյանի թղթերը ջոկելու, դասավորելու և ցուցակագրելու ժամանակ մենք առաջին անգամ առիթ ունեցանք տեսնելու և կարդալու Պատկանյանի վերոհիշյալ թուղթը Գլադստոնին, դրա պատասխանը անգլիական բնագրի հետ միասին և դրանց վերաբերյալ գրագրությունը: Թուղթը երկու օրինակ էր՝ մեկը արտագրություն, օտար ձեռքով կատարված բնագրից, մյուսը՝ պարզագույն և մաքուր պատրաստված օրինակ, գրված յուր՝ բանաստեղծի ձեռքով մի մեծագիր՝ փոստի նուրբ թղթի վրա: Թղթի այդ օրինակները, սակայն, թեև ընդհանուր իմաստով միևնույն բովանդակություն ունեին, բայց տարբերվում էին միմյանցից իրենց խմբագրությամբ:

Թե բանաստեղծը դրանից ո՞րն է ուղարկած եղել Գլադստոնին, մենք դժվարանում ենք ճշտությամբ որոշել, բայց հավանական ենք համարում, որ ուղարկված լինի երկրորդը, յուր ձեռքով գրածը, որովհետև դա ավելի մեղմ ոճով, տեղին ու հանգամանքին վայելուչ լեզվով է գրված, քան առաջինը:

Թուղթը, ինչպես մենք արդեն ասել ենք, ուղարկվել է 1890 թվի դեկտեմբերին, բայց դա, ինչպես երևում է, շատ առաջ է գրված եղել: Այդ մասին մենք նրա մի նամակում, գրված Մոսկվայից 1886 թվի դեկտեմբերի 29-ին հաշտուր Զալխուշյանին, կառուցում ենք հետևյալը. «Գրեցի՞ր այդպիսի Փորտուգալյանին Ֆեյան նամակի հրատարակման մասին: Այսօր, վաղը Գլադստոնը կփոխարինե Սալյուսթրիին և մեր գործը նրա ձեռքը կանցնի: Շտապե ինդոկու Փորտուգալյանին, որ նա ջանա ոչ միայն ապելու «Առմենիայի» մեջ, այլ և Թուրքմանե անդլերեն, Գաանսերեն, գերմաներեն և մե օրինակ, ինչպես փայլ է, թարգմանությամբ հանդերձ, իրեն՝ Գլադստոնին ճամբե»:

Դա Նոր-Նախիջևանցի, հալիբյան գրադրոցի աշակերտ, Նախիջևանի նոտար և արհեստավորական գալրոցի հոգաբարձության նախագահ հաշտուր Զալխուշյանը՝

Ռ. Պատկանյանի շատ մտերիմ բարեկամն էր, այնքան մտերիմ, որ այնպիսի դադունապահությամբ ստացված թղթի պատասխանը նա միայն հարկավոր էր համարել առաջին անգամ նրան հաղորդել, և այդ մի առանձին խորհրդավորությամբ հետևյալ համառոտ տողերով. «Ազնիվ բարեկամ, Խ. Խ. (Խրիստաֆոր Խրիստաֆորովիչ), ուղարկում եմ քեզ պատճենը... և երդմնեցնում եմ գաղտնիք պահելու նրա բովանդակությունը, եթե չուզես մեր աշխարհի հիմն ի վեր կործանումը, վասնզի Գլադստոնի առջև «ПОЛТЕ» երևնալը (նա գաղտնիք և համեստություն կխրատե, իբրև գործի հաջողություն) կնշանակի առ միշտ կորուսանել հալիական խնդիրը»:

Թղթի թարգմանողն անգլերենի և մատուցողը մի հանձնարարականով Գլադստոնին եղել է Օրսֆորդի համալսարանի թուրք և հայ լեզուների դասատու՝ արանից տարիներ առաջ միասնաբար թուրքահայ կարապետ Հախուրյանը. ու վաղուց ի վեր հաստատված էր մշտական բնակությամբ նախ Մանչեստրում և ապա Լոնդոնում. նա քաջ տիրապետում էր անգլերենին և շատ հայասեր էր: Թուղթն ուղարկված է եղել մի նամակով, որի Լոնդոնում ստացվելը, անգլերենի թարգմանվելը և մի հանձնարարական նամակով Գլադստոնին մատուցվելը և այլ մանրամասնությունները կարելի է տեսնել և իմանալ հիշյալ Կարապետ Հախուրյանի պատասխան նամակից, որ դնում ենք այստեղ:

«1 հունվար

Առ սիրելի և ազնիվ բարեկամին Տյար Ռաֆայել Պատկանյանի

Ի Նոր-Նախիջևան

Ստացա դեկտեմբեր (Ն. Տ.) 22-ին ձեր դեկտ. 1/13 թվականով գրած պատվական նամակն և նաև ներփակած Մեծանուն պարոն Գլադստոնի ուղղյալ հիշատակագիրը գրությունը:

Պատիվ ունեցա նաև ստանալու Ձեր դեկտ. 7/19 թվականով երկրորդ պատվականը:

Ուրախ պիտի լինիք իմանալու, թե երեկ ավարտելով Ձեր հիշատակագրի թարգմանությունը անգլերենի, առաքեցի զայն ընդ մի մասնավոր նամակով գրեալ իմ կողմանե փասն հանձնարարության ձեր անձին և գրություն: Օրինակեցի ձեր հայերենի բնագիրը, ինչպես նաև նորա թարգմանության պատճենը: Բնականաբար այս գործողու-

թյունը օրեր սպառեցին և չկարողացա ձեր գրությունը ավելի կանուխ հասուցանել պարոն Գլադստոնին ձեռքը, որ ինչպես հայտնի է, այժմ կգտնվի յուր գեղջային բնակարանը Հաունարտըն Քասթլը, Չեսթեր քաղաքի մոտ: Այս օրերս շտեմա Չերազն, բայց կտեսնամ զինքը այսօր, վաղը: Պիտի ջանամ Ձեր գրությունը հրատարակել տալ Տեյլի Նյուզի մեջ, սակայն կվախենամ, թե ուր ընդարձակությունը պատճառ լինի յուր ամբողջությամբ չհրատարակվելուն: Գուցե ավելի օգտակար կլիներ զայն իբր *brochur* տպել ու հետո ցրվել: Դեկտ. 29-ը պարոն Գլադստոնի 82-րդ ծննդյան տարեդարձն էր և այս երեք օրերու մեջ 1400 շնորհավորության նամակ է ստացել: Անշուշտ, այս պատճառով Ձեր նամակին շուտով չպատասխանեցի, բայց ես խոստացա ձեզ հասցնել յուր տալիք պատասխանը: Ձեր անունը պիտի շփածկեմ, այլ պիտի հրատարակեմ: Ձեր այս փափագը իրան ալ հայտնած եմ: Մարտելո «Արմենիան» յուր խմբագրի հիվանդության պատճառով չհրատարակվեր ատենն մը ի վեր: Ձեր հայերենը անոր պիտի առաքեմ:

Գաղղիերեն թարգմանելու և ցրելու մասին հուսամ այդ օգնությունը տյար Չերազ ստանձնե: Կխնդրեմ, հաղորդե բարեներս պարոն Մ. Սկիդարյանին, ի երբ տեսնաս զինքը, Ձեզ և բոլոր բարեկամաց և համակրողաց շնորհավոր նոր տարի կմաղթեմ:

Ողջ լերուք և Հայաստան Աստվածն լինի Ձեզ պաշտպան և ներշնչող և մեր մեծ նախնիք հետևելի օրինակ:

Կրտ. Հակոբյան»:

«Հ. Գ. ներկայիվս պիտի ընդունեք: Մեր Մանչեստրի միտինգի ստորագրությունը և նաև Նուպար Փաշայի մի գրությունը»:

Պատասխանը ստացվել է հունվարի 9-ին: Դա բաղկացած է եղել երկու նամակից՝ քուն պատասխանը գրված Հակոբյանին Պատկանյանին հաղորդելու համար, և մի բացատրական նամակ գրված իրեն՝ Հակոբյանին: Այդ երկուսն էլ Հակոբյանը թարգմանելով հայերեն, իրենց անգլերեն բնագրի հետ միասին յուր մի երկրորդ նամակով հունվարի 5-ին ուղարկել է Նոր-Նախիջևան՝ Պատկանյանին: Դիտում ենք այստեղ, թե Հակոբյանի այդ երկրորդ նամակը և թե բուն պատասխանի ու դրա բացատրականի թարգմանությունները:

«Մեծապատիվ և ազնիվ

պարոն Ռաֆայել Պատկանյան
Ի Նոր-Նախիջևան

Պատիվ ունեմ հաստատելու ամսույս սեկին գրածս:

Ամսույս 3-ին ստացա պարոն Գլադստոնի պատասխանը թե կից նամակին և թե իմ նամակիս, զոր գրած էի մեջը և Ձեր գրությունը հանձնարարելու: Այս պատասխանին անգլերեն օրինակն ու թարգմանությունը կներփակեմ: Իմ իրեն գրած նամակիս մեջ Ձեր անունը, համբավը և բնակած ազատ քաղաքը հայտնել է Ձեր ինձ առաքած նամակը (յուր հասցեին) և նաև խնդիրը, որ թարգմանեմ զայն և բնագրի հետ իրեն հասցունել նկարագրելի հետո, ըսի, թե ամեն ուսեալ հայ կճանաչե Ձեզ Գամառ Քաթիպա գրանվամբ և թե դուք մեր ամենամեծ ազգային բանաստեղծնեռն եք, եթե ամենամեծը չեք, թե թեպետ և Ձեր գրությունը խիստ երկար է, — բոլորապես կատարյալ է, անպակաս: Թե մեծ բանաստեղծք մեր իրենց դարին և ազգին մարգարեքն և տեսնողքն են, թե նոքա այդքան տխուր իրողությանց և ապագային փառավոր կարելիությանց մեջտեղ կկանգնեն, թե ներկայացնելով Ձեզ և Ձեր գրություն, անձ մը կներկայացնեի, որ լավ օժտված է խոսելու ոչ միայն ի դիմաց Տաճկահայաստանի, այլ բոլոր հայկական ազգի, որո հույսը և դառն ցավը այսչափ ատենն ի վեր երգած է, թե Ձեր լեզուն նվրոպական աշխարհավարաց լեզուն չէ, սակայն Ձեր դիմումն և բողոքն շիտակ ձեր սրտեն կբղխի, ուստի կհուսամ, թե Ձեր գրության հարկ եղած նկատառումն ու կարևորությունն ընծայե. թե կփափագիր Ձեր անունը գաղտ պահել, եթե Ձեր բողոքը հրատարակվի երևակայելի պատճառք, թե ուրախ կլինիմ յուր տալիք շնորհքի պատասխանը Ձեզ հղելու: Եվ նաև շնորհավորեցի յուր ծննդյան օրը, որ զեկտեմբերի 29-ին էր, բսելով թե որչափ որ երկար ապրեք առանց կորուսանելու յուր առողջությունը և ույժը, այնքան ավելի մարդկություն կօգտանավորվի և անկյալ Հայաստանի հույսը իրենց երջանիք լրմանն կմոտենան:

Նրեկ և այսօր մեկ մեկ օրինակ ուղարկեցի Ձեր բողոքի օրինակեն և Գլադստոնի պատասխանեն... առ Մանչեստրի Կարդյանի և Տեյլի Նյուզի, նայենք ինչպես կհաջվի հրատարակությունը:

Պարոն Գլադստոնի գրած վերջին պարբերության միտքն այն է, թե այնչափ շատ գործեր ունի Անգլիոյ ներքին գործոց մեջ, որ չի կրնա տեղաժին չափ և պետք հղածին պես հայկական խնդրով զբաղվել:

Մնամ Ձեր հարգանքը
Կր. Հակոբյան

Բուն պատասխանը պատճեն (թարգմանություն):

Հուլիսի 2-րդ թվական
2 հունվարի 1891

Սիրելի պարոն,

Ձեր նամակն, ինչպես նաև պարոն Ռաֆայել Պատկանյանինը, զոր կառաքեք թե բնագրով և թե թարգմանությամբ, ստացա և կարդացի ցավառիթ հետաքրքրությամբ:

Առայժմ հաղորդեցեք համբավատենչ բանաստեղծին, որ հայոց խնդրոյն և նոցա կրած տառապանքին քաջ տեղեկացա նրա սրտառուչ գրվածքեն:

Միամիտ եղեք, ես կհսկեմ: Անգլիոյ առանձին պարտքն է այդ խնդիրն շարժելու համար ամեն ջանք գործ դնելն: Բայց երբ, ժամանակի ղեկավարն Աստվածն է: Համեստություն և զաղտնապահություն: Հայաստանի բարեբախտությունն ես կշնորհավորեցունեմ հայոց ամենահռչակավոր բանաստեղծին:

Հավատարմապես Ձերն

Ուլեամ Իուարդ Գլադստոն

Պատասխանին վերաբերյալ
բացատրական գրությունը

(Թարգմանություն)

Հուլիսի 2-րդ թվական
2 հունվարի 1891

Սիրելի պարոն,

Ձեր նամակն, ինչպես նաև, պարոն Ռաֆայել Պատկանյանինը, զոր կառաքեք թե՛ բնագրով և թե՛ թարգմանությամբ, ստացա և կարդացի ցավառիթ հետաքրքրությամբ:

Դուք գիտեք, թե խորապես ցավ կզգամ Հայաստանի մեջ այժմի գործադրված կառավարական օրենքին վրա: Ինձ կթվի, թե մեծ պետությանց պարտքն է իրողությանց վերահասու լինել և ի մի կողմ դնել շափաղանցությունը, որք այսպիսի պարագայի մեջ սպասելի են: Տարակույս չունիմ, թե նոքա կարողություն ունին ստանալուն մի դարման, և կընդունիմ Անգլիոյ մասնավոր

պարտքը զանոնք շարժելու համար ամեն ջանք ի գործ դնելու:

Կարելի է Ձեր թղթակիցը դժուրավ չի կրնար ըմբռնել, թե անձ մը, որո միտք այն ժամանակը արդեն լիովին բեռնավորենա պարտքերով յԱնգլիա, որք բացարձակապես անհրաժեշտ են, եթե մինչև անգամ հիմարաբար (իմաստությամբ պակասությամբ) փորձ ընեն, չկրնար հայկական խնդրո մեջ, ինչպես կասեմք, գործոն թիակն ստանձնել:

Ձեր շնորհքն կակնկալեմ, որ զայս յուր մտաց հաջողենք, և կմնամ, սիրելի պարոն,

Հավատարմապես Ձերն

Ուլեամ Իուարդ Գլադստոն

Առ. մեծապատիվ

Տյար Կ. Հակոբյանի

Այս գրագրությունից ամենակարևորը մեզ համար, ի հարկե, Գլադստոնի պատասխանն է յուր բացատրականով: Արդ, համեմատելով այդ երկու նամակի բովանդակությունը միմյանց հետ մենք գալիս ենք այն եզրակացության, որ, իսկապես, նա՝ Գլադստոնը ոչ մի դրական խոստում էլ չի արել Պատկանյանին և դա իզուր և միամտաբար սպասելիս է եղել նրա խոստմունքի իրագործման: Այդ տեսակետից նրա պատասխանը եղել է մի նոր պնդության հարցուկի պատասխան — այո, և ոչ, ինչ որ նա խոստացել է յուր պատասխանով, ջնջել է յուր բացատրականով, մի խոսքով, ինչպես ասվում է, մի ձեռքով գրել է, մյուսով ջնջել:

Այստեղ դնում ենք Ռաֆայել Պատկանյանի «Աղերսագիրը» կամ ինչպես Հակոբյանը կոչել է «Հիշատակագիրը», որ առիթ է տվել մեզ գրելու այդ (Աղերսագիրը) և դրան վերաբերյալ մեր նորագույն պատմության համար կարևոր վավերագրերն իրենց հարակից հանգամանքներով պահպանած լինելու նպատակով:

«Պայծառափայլ Տե՛ր,

«Քու անունը և քու քրիստոնեական գործունեությունը միայն նա չի ճանաչիլ, որ իրեն մարդ լինելու համար ևս պիտակցություն չունի. իսկ երկրագնդիս վրա կեցող ամեն փոքր ի շատե մտքով զարգացածը արդեն գիտե, թե ով է Գլադստոնը, վասն զի Գլադստոնին ճանաչելը կնշանակե աշխարհիս վրա իրեն բարեկամ, պաշտպան և հովանավորիչ ունենալ: Եթե Գլադստոնը մեզմեն

200 տարի առաջ ապրած լինեի, նա անշուշտ երկնքի վրա լուսավառ առողերեն հեռուն անջնջելի արձան կունենար և բազմաթիվ տաճարներ նվիրած կլինեին նորա սլանձալի անվան:

«Հայերը կճանաչեն Գլադստոնին, կպաշտեն նրան, կպատկառեն նորա առջև և այժմ հանուն նորա եկեղեցիացած, մտքով դեպի նա դարձած՝ հավատով և հուսով կվերառաքեն նորան, ինչպես սրբության, իրենց այս աղոթքը:

«Անմահ մահկանացու, նստի՛ր և տառապյալներու, պաշտպան անտերներու, հովանավորի՛ր աստանդականներու, մեծդ Գլադստոն, լսէ, մեր աղոթքը, որ կվերառաքենք մեր այս հուսաբեկ ժամերուն, պինդ վրաստահած քու վրա այս մեր օրհասական վարկյանին, ամենեն չքած, հույսներս երկընթեն ու երկրին կտրած, կզիմենք քեզ, ինչպես մեր վերջին հույսը, բայց եթե դու ևս երեսդ դարձնես մեզմեն, եթե չար բախտի բերմամբ մեր այս աղերսը չհասնի քեզ, կամ թե ուշանա՝ մենք անվերադառնալի պիտի կորչենք: Պայծառափալ Տեր, մենք տկար ենք, մենք հոգևոր ենք, իսկ մեզ շրջապատող թշնամին շատ է և անգութ: Շտապե օգնության հասնելու:

«Հորդորե մարդկության տալ մեզ այն, ինչոր քու աշխարհքի հետին թշվառական մշակը ունի. թող չպակասի մեր վրայեն այն գութը, որն ամեն անգլիացի ունի դեպի իրեն շուրջ, կովը և ձին. թող ազատեն մեզ այն բաներեն, ուստի ազատ են քու աշխարհքի ամեն սողացող որդ ու ձնու: Մի՛թե անհնար է մեր այս համեստ խնդիրը կատարել, մի՛թե մեր այս պահանջմունքը մի տրեխ լրբության նմանություն ունի:

«Ի՞նչ կասեր ձեր գյուղական վարժապետը, եթե ստահակ աշակերտները, առանց հարկավորության, կրունկներու տակ տրորեին բզեզին և թիթեռին: Իսկ մեզ ամեն օր անխնայաբար կմորթեն մահմեդական քուրդը, չերքեզը, թաթարը և օսմանլին, և մեր մահմեդական կառավարիչները կտեսնեն այդ ամենը, չեն սաստիլ շարադործներուն և չեն պաշտպանիլ անմեղներուն:

«Ի՞նչ կասեր Անգլիայի ամենապտոր դատակարգի մարդը, եթե գային մտնելին նորստունը, աչքի առջև բռնաբարեին նրա կնոջ պարկեշտությունը և աղջկա կուսությունը: Իսկ մեր բոլոր դասակարգերու մարդիկ մեծատունեն բռնած մինչև փոքրավորը ապա-

հով չեն աստվածային իր օրը իրենց սուրբ առաքապտը պղծած տեսնելեն:

«Ի՞նչ կասեր ձեր աշխարհքի ամենապատակ մարդը, որն յուր գանդապտը հասցրել է դատավորին, երբ այդ դատավորը հարյուր արդարամիտ անգլիացի վկայի արհամարհեր և մեկ կաշառված, տգեւ, սրիկա տաճկի խոսքին հավատար և ըստ այնմ վճիռ կտրեր:

«Ի՞նչ պատկեր կներկայացնեի քու այսօրվա ծաղկյալ Անգլիան, երբ աշխատասեր, սակավապետ և խոհեմ ժողովրդիդ քրտանց վաստակի մինչև վերջին նաքարակիտը, ամեն տարի և ամեն օր, գար, համիշտակեր անորեն բարբարոսներու ոհմակը. եթե թագցնեիր արծաթդ, մտրակով ու գավազանով խոշտանգեր քեզ և, եթե ավելի համառեիր, տեղն փ տեղ մորթեր թնտանիքդ: Կհարցունեմ՝ այսպիսի բռնաբարության քանի տարի կզիմանար Անգլիադ: Բայց թշվառ Հայաստանը ահա 600 տարի է, որ այս տանջանքի մեջ է, օր ու գիշեր առ Աստված և առ մարդիկ կբողոքե, և նորա աղաղակին ահանջ դնող չկա:

«Ի՞նչ կասեր քու աշխարհքի տգետ ռամիքը, որո մանկությունը, պատանեկությունը և արրուն հասակը անցել է ամեն նոսաակ գրկանքի և տուայտանքի մեջ և որո միակ մխիթարությունը մնացել է յուր դավանած կրոնը, որո մեջ նա կգտնե յուր ծերության սփոփանքը և գալոց կյանքի հույսը. կհարցունենք՝ ի՞նչ կասեր նա, եթե այդ կրոնի պաշտոնն անգամ կատարելու նորան արգելք լինեին: Իսկ հայր յուր եկեղեցու և ներքին կրոնական զգացմունքի մեջ անգամ ազատություն չունի:

«Ի՞նչ կասեր որևէ անգլիացի, եթե նրան ասեին՝ մոռացիր, արհամարհե այն լեզուն, որով քո մայրը օրօրոցիդ մեջ նիրհ է բերել քո մանկական աչքերուն. ամենայն ինչ, որ մարդուս ներքին գեղեցիկ աշխարհն է՝ ծանոթություն ստացել ես այդ լեզվով, այն լեզուն, որով քո ամուսինը շշնջել է յուր քնքույշ զգացմունքը ականջիդ, այն լեզուն, որով նիրաական դավալունքդ ավետել են քեզ «հայր և ծնող» ասելով: Իսկ հայի վերաբերմամբ աններելի բրեական հանցանք է հորը յուր հարազատ որդու, մորը յուր դստերը և վարժապետին յուր աշակերտի հետ մայրենի բարբառով, այսինքն՝ հայերեն խոսելուն:

«Ի՞նչ կասեր անգլիական ազգը, եթե նա մի թշվառ օր նոսաներ իրեն օտար դատավորի և կառավարչի իրավասության ներքո անվերջ ժամանակով, և հուսահատված

երբեիցե իրեն տգտաված տեսնելու այդ դժոխային, ամոթալի վիճակեն: Իսկ հայր վաղուց և շատ վաղուց մոռացել է յուր դատի վճիռը լսելու յուր համազգիի բերանեն:

«Ի՞նչ կասեր անգլիական ազգը, եթե համոզված լիներ, որ յուր դրացիները գիշեր ու ցերեկ միտք կանեն Անգլիայի և անգլիացիի անունները անհետացնել մարդոց բերնեն և աշխարհքիս երեսեն: Իսկ հայերու բանտ և կախաղան կսպառնան, եթե նա արտասանե հայ, Հայաստան և հայրենիք բառերը:

«Ահա ի՞նչ վիճակի մեջ է $2\frac{1}{2}$ միլիոնյա հայ ազգը ընդհանրապես և ամեն մի հայ մասնավորապես:

«Այս ազնիվ Տեր, մեր ձեռք պետք էր տալ տիկին Քիշեռ Ստոփի գրիչը, որ մենք կարողանայինք քեզ հասկացնելու, որ Ամերիկայի նեգրերեն թշվառ մի ազգ կա աշխարհքիս երեսին և այդ ազգի անունն է հայ:

«Մենք աղի արտասուքով թրջեցինք պաշտառափայլությանդ հորինած Բուդարիայի մառթեռոլողիան. ա. այդ անմահ քերթվածքը գրգռեց միլոնավոր ազնիվ սրտեր և սասանեցուց բռնակալի արքա-

յական աթոռը. բայց եթե իմանայիր, որքան տկար է բուդարացոց տանջանքը համեմատությամբ այն աներևակայելի տանջանքին, որն ահա, 600 տարի, ամեն օր, ամեն վարկյան կկրե ողորմելի հայոց ազգը... և դորա հետևանքը այն եղավ, որ մեկ ժամանակվա երեսույն միլիոնանոց ազգը այժմ հազիվ հազ կհասնի $2\frac{1}{2}$ միլիոնի, և մեկ ժամանակվա ծաղկյալ Հայաստանը յայս օրս ամալի անապատ է, ուր գիշատիչ գազաններ և շաղղակեր թռչուններ անգամ չկան, վասնզի նոցա համար լափելու բան մնացած չէ շատ տեղ...»

«Մեծ, անմահ և դյուցազնասիրտ Գլադստոն, ահա մենք մեր հոգին ու մեր սիրտը թափեցինք քու առջև, ահա մենք գիմեցինք քու մարդասիրական օգնության, մենք համոզված ենք, որ մենակ քո ունքի շարժվածքը կբավե մեր աղետալի վիճակը բարձրելու և երջանկացնելու, ինչպես որ երջանկացուցիք բուդարներուն և իրլանդացիներուն (Հոմբուլ). մենք հայերս անհամբերությամբ կսպասենք քո սրտեն բխած մեկ կաթիլ գութին, կսպասենք, կսպասենք, կսպասենք... Եվ մի՞թե քո այս վերջին պարտքդ չի տված պիտի հանդիսանաս հավոր դատավորի աթոռի առջև»:

